Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ
«ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ»ՓԲԸ

Republic of Armenia
Lori marz
"LORI WATER AND SEWERAGE" CJSC

ՀՀ, 2007 ք.Վանաձոր, Ն.Ստեփանյան 2ա
2a N.Stepanyan St., 2007 Vanadzor, Armenia
Հեռ/ֆաքս՝ (+374 322) 4 82 00
Tel/Fax: (+374 322) 4.82.00
Էլ. փոստ՝ contact@loriwater. am
E-mail:contact@loriwater. am
Վեբ կայք՝ www.loriwater.am
Web page: www.loriwater.am

Ձ/Կ թիվ 14-1030

«15» 07 2014թ.

# ՀՐԱՎԵՐ

*«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի*
*կարիքների համար՝*
***Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ***

*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված՝* ***տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ:***

*Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀՏԿՆՋՏԴԿ-ԼՋ-ՇՀԱՊՁԲ-11/11-14-1»:*

*Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնելք.Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա հասցեով, մինչև2014թ. Հուլիսի 25-ը, ժամը՝ 13:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա.Պողոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:*

*Հայտերը կբացվեն «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ ք. Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա, հասցեում, հուլիսի 25-ին, ժամը՝ 13:00-ին:Գնմանառարկա է հանդիսանում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝* ***տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերումը:***

*«Լոռի-ջրմուղկոյուղի»ՓԲԸ-ի կարիքների համար՝* ***տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների*** *մատակարարման (որը կազմված են՝29 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում(Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,*

*բ. Գնային առաջարկ (Հավելված N 2):Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկն ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

*Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:*

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

*Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:*

*Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ՝* ***տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների*** *դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:*

*«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ myarpi@yandex.ru:*

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Գլխավոր տնօրենի տեղակալ՝ Հ.Անտոնյան